ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«09» սեպտեմբերի 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ. Անանյան

ԳԲԽ-92/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Մակսիմ» ՍՊԸ-ի 26.08.2016թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1.«Մակսիմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Մակսիմ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 26.08.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընկերությունը (www.armeps.am) էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով առգիծ հայտը լրացնելու եղանակով մասնակցել է ՀՀ

պաշտպանության նախարարության կարիքների համար (այսուհետ նաև՝ Պատվիրատու)՝ կրծքանշանների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին, որի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 01.08.2016թ. ժամը 11.00-ին տեղի:

Նույն օրը՝ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի՝ բացող անդամների կողմից հայտերի բացման թիվ 2 արձանագրությամբ ծանուցվել է, որ «Մակսիմ» ՍՊԸ-ի հայտն ընդունվել է, սակայն http://www.armeps.am էլեկտրոնային կայքի (այսուհետ նաև՝ Համակարգ) կողմից համարվել է հետագա գնահատման համար ոչ ընդունելի (հանձնաժողովը հայտը բացելու կամ գնահատելու հնարավորություն չունի):

Ընկերությունը 01.08.2016թ. դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Մակսիմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված <ZIP tender> հայտը՝ (էլեկտրոնային կրիչով) և հայտնել հայտը Համակարգի կողմից չընդունելու պատճառները:

04.08.2016թ. Կենտրոնից ստացել ենք պատասխան, ըստ որի՝ «.. Ընթացակարգին «Մակսիմ» ՍՊԸ-ի հայտի փաթեթը կոդավորելիս, տեղի է ունեցել սխալ կազմակերպության համակարգչում, որի հետևանքով փաթեթը չի ապակոդավորվել: Պատճառը հնարավոր չէ պարզել, քանի որ տվյալ գործառույթը տեղի է ունենում կազմակերպության համակարգչում»:

«Մակսիմ» ՍՊԸ-ն հայտնել է նաև, որ Ընկերության կողմից ներկայացված Ընթացակարգի հայտը համակարգի կողմից ոչ ընդունելի լինելը (հայտի փաթեթը կոդավորելիս տեղի ունեցած սխալը) չէր կարող լինել Ընկերության համակարգչի պատճառով, ուստի վերջինիս հայտը չքննարկելը անհիմն զրկում է գնումների գործընթացին միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով մասնակցելու հնարավորությունից:

«Մակսիմ» ՍՊԸ-ն բողոքով պահանջել է՝

1. դադարեցնել գնահատող հանձնաժողովի N 2 արձանագրությամբ կայացված՝ «Մակսիմ» ՍՊԸ-ի հայտը չքննարկելու մասին որոշումը, վերականգնել Ընկերության խախտված իրավունքը և ապահովել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2–րդ մասով նշված սկզբունքներով Ընկերության մասնակցությունը վերը նշված ընթացակարգին:

2. Մասնակի դադարեցնել գնահատող հանձնաժողովի կողմից կայացված 4.2 որոշումը՝ Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասով:

Բացի այդ, բողոքաբերը նշել է, որ 16.08.2016թ. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 4.2 որոշմամբ Ընթացակարգի մասնակից Երևանի ոսկերչական գործարան 1 «Գնոմոն» ԲԲԸ-ի հայտը մերժվել է և Ընթացակարգը հայտարարվել չկայացած:

23.08.2016թ Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ի կողմից ներկայացրել է բողոք վերոնշյալ որոշումը դադարեցնելու պահանջի մասին:

Ընկերությունը նշել է հետևյալ փաստերը.

ա) ՀՀ ֆինանսների նախարարությունը 14.07.2016թ. նախաձեռնել է բողոքարկման պաշտոնական ընթացակարգ՝ Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պահանջի մասին (պատվիրատու՝ ՀՀ ԿԱ Ոստիկանություն, տեղեկությունը հրապարակված է 26.07.2016թ. http://gnumner.am/ կայքում):

բ) 28.07.2016թ. կայացած Գնումների բողոքարկման խորհրդի նիստով արձանագրվել է, որ վերը նշված կազմակերպությունը ՀՀ ԿԱ Ոստիկանության կողմից հաստարարված «ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՇՁԲ-15/7-ՄԿ/2016-1/ՏՎ» Ընթացակարգին հայտ ներկայացնելու պահին ունեցել է ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով, ինչպես նաև «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունքը սահմանափակված մասնակիցների ցուցակում» ներառվելուց հետո մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության կողմից հայտարարված ընթացակարգին (տեղեկությունը հրապարակված է https://www.youtube.com/watch?v=-u2Tr6svk5U կայքում): Նույն ժամանակահատվածում Ընկերության կողմից հայտեր են

ներկայացվել նաև այլ ընթացակարգերին, որոնց մասին տեղեկությունները հրապարակված են http://gnumner.am/ կայքում,

գ) Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ն 16.03.2016թ-ից մինչև 16.03.2017թ. ներառված է «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունքը սահմանափակված մասնակիցների ցուցակում» (տեղեկությունը հրապարակված է http://gnumner.am/ կայքում):

Հիմնվելով վերը նշված փաստերի վրա և առաջնորդվելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ՝ «Մակսիմ» ՍՊԸ-ն պնդել է, որ Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ի հայտը ենթակա էր մերժման, քանի որ ՀՀ ԿԱ ոստիկանության կողմից հայտարարված ընթացակարգի ընթացքում ներկայացրել է կեղծ տեղեկություն, ինչը անհրաժեշտ և բավարար հիմք է նրան գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու և գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունքից զրկելու համար:

Բողոքաբերը որպես բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները նշել է հետևյալը.

1. Ընթացակարգի ընթացքում մեր ընկերություն կողմից ներկայացված հայտը Համակարգի կողմից՝ գնահատման համար ոչ ընդունելի համարվելու մեջ մեր ընկերության պաշտոնատար անձանց մեղքը կամ համակարգչում տեղի ունեցաց սխալը չէր կարող լինել, որովհետև.

1.1. ՀՀ կառավարության կողմից 05.12.2013թ. ընդունված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգը հաստատելու, ՀՀ կառավարության 2002 թ.-ի Հոկտեմբերի 31-ի թիվ 1904-Ն որոշման մեջ լրացում կատարելու և ՀՀ կառավարության 2011 թ.-ի դեկտեմբերի 29-ի թիվ 1916-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1370-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգի»՝

- 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանվում է Համակարգի հասկացությունը, ըստ որի՝ «համակարգ՝ www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգ»:
- 4-րդ կետի համաձայն՝ «Համակարգն ունի տվյալները կոդավորելու և մինչև հայտերի բացման պահն այդ տվյալների ապակոդավորման անհնարինությունն ապահովելու հնարավորություն»:

Նշված գործողությունները մանրամասն նկարագրված են նաև Համակարգում հրապարակված (տես՝ http://www.armeps.am/epps/help.do) «Տնտեսական օպերատորի օգտվողի ձեռնարկում», որի «11.2.13. Փաթեթավորել մրցույթի պատասխանը» ենթաբաժնի 2-րդ պարբերության համաձայն.

«Մրցույթի պատասխանի պարունակությունները փաթեթավորելու համար օգտվողն ընտրում է կոճակը: Այս գործողությունը կառաջացնի մեկ կամ ավելի ֆայլեր կախված մրցույթի համար սահմանված ներկայացման տիպից.

Միափուլ ներկայացում.

Համակարգը կգեներացնի մրցույթի պատասխանն իբրև մեկ, սեղմված ու գաղտնագրված ֆայլ, ծրագրում հայտնի իբրև 'Հայտի Փաթեթ':»

Իսկ 3-րդ պարբերության 2-րդ կետում ասվում է.

«- Խնդրեմ ի նկատի ունենալ, որ փաթեթավորված՝ վերը նկարագրված քայլերի միջոցով ստեղծված ֆայլը (հայտի փաթեթը) գաղտնագրված է: Ուստի, օգտվողին կցուցադրվի «ոչ ճիշտ ֆայլի ձևաչափ» ուղերձը, երբ փորձի բացել այս ZIP ֆայլը օգտագործելով winzip և այլն:»

ՀՀ կառավարության 05.12.2013թ. թիվ 1370-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգով», նույն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ ֆինանսների նախարարը 10.01.2014 թ.-ի թիվ 7-Ա հրամանով հաստատված «Էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների կատարման վերաբերյալ ուղեցույցով», Համակարգում հրապարակված «Տնտեսական օպերատորի օգտվողի ձեռնարկով» կամ այլ նորմատիվ իրավական ակտով, ինչպես նաև գործնականում առգիծ հայտը լրացնելու եղանակով ընթացակարգին մասնակցելու ընթացքում հատուկ եղանակով տվյալները կոդավորելու համար որևէ ծրագրի ներբեռնումը և դրա օգտագործումը (ինչպես Մասնակիցների կողմից, այնպես էլ Համակարգի կողմից մեր համակարգչում) նախատեսված չէ:

Նախատեսված չէ նաև Մասնակիցների համակարգիչների չափորոշիչներին կամ դրանց օպերացիոն համակարգերի տեսակներին վերաբերող ցանկացած պահանջ, որոնց բացակայությունը կարող է խոչընդոտել գործընթացին Մասնակիցների ընթացակարգին մասնակցելուն: Բողոքաբերը որպես օրինակ նշել է հետևյալը.

ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 7-Ա հրամանով հաստատված «Էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների կատարման վերաբերյալ ուղեցույցի» 3-րդ մասում մանրամասն, հետևողականորեն և քայլ առ քայլ ներկայացնելով մասնակցի կողմից գնումների էլեկտրոնային համակարգի /ARMEPS/ միջոցով բաց ընթացակարգով գնումների կատարման գործընթացը, 6-րդ ենթակետում նշում է.

«1. Մասնակիցը՝....

6) բացում է պատուհան «Ջավա (Java)» ծրագրով (համակարգչում պետք է տեղադրված լինի «Ջավա (Java)» ծրագրի 6-րդ տարբերակը), որը երկու լեզվով է՝ հայերեն և անգլերեն, »: Եվ ոչ մի այլ պահանջ համակարգչին վերաբերող:

Նախատեսված չէ նաև Մասնակիցների կողմից համակարգիչների հետ միասին այնպիսի օժանդակ սարքերի և /կամ/ սարքավորումների օգտագործումը, որոնք կապահովեն, կաջակցեն կամ ցանկացած այլ եղանակով կմասնակցեն Համակարգի կողմից տվյալների կոդավորման կամ ապակոդավորման գործընթացին: Այդ պատճառով էլ մասնակիցները և՛ ըստ ձեռնարկի, և՛ գործնականում չեն կարող տեսնել գաղտնագրված ֆայլի բովանդակությունը:

Բացի այդ, Համակարգի <http://www.armeps.am/epps/home.do> հիմնական էջում նշված է.

«Այս համակարգը տրամադրում է գնային առաջարկները էլեկտրոնային տարբերակով լրացնելու և ներկայացնելու ապահով մեթոդ»:

«Մակսիմ» ՍՊԸ-ն նշել նաև, որ Ընթացակարգին ներկայացրած <ZIP tender> հայտը՝ /էլեկտրոնային կրիչով/ Կենտրոնի աշխատակիցների կողմից իրենց ներկայությամբ ուսումնասիրելիս հաջողությամբ ապակոդավորվել է, պարունակությունը մանրամասն հետազոտվել է և թերություններ չեն հայտնաբերվել:

Հաշվի առնելով վերը շարադրվածը՝ բողոքաբերը պնդել է, որ Համակարգը տվյալների կոդավորումը կամ ապակոդավորումը կատարում է մասնակիցներին անհայտ և մասնակիցների համակարգիչներից բացակայող տեխնիկական միջոցների և /կամ/ ծրագրերի միջոցով, առանց Մասնակիցների համակարգիչների մասնակցության և /կամ/ օժանդակության, ինչն իր հերթին բացառում է հայտի փաթեթը կոդավորելիս սխալը մեր կազմակերպության համակարգչում տեղի ունալը:

Ուստի Ընկերության համար հասկանալի չէ 04.08.2016թ. Կենտրոն կողմից հասցեագրված գրությամբ ներկայացված պարզաբանումը:

1.2. Ընթացակարգին մասնակցելու ընթացքում Ընկերության կողմից (որպես էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների Մասնակից)՝ ՀՀ կառավարության 05.12.2013թ. թիվ 1370-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման կարգով», ՀՀ ֆինանսների նախարարը 10.01.2014թ. թիվ 7-Ա հրամանով հաստատել է «Էլեկտրոնային ձևով իրականացվող գնումների կատարման վերաբերյալ ուղեցույցով», ինչպես նաև գնումների էլեկտրոնային Համակարգում /ARMEPS/ հրապարակվցած (տես՝ http://www.armeps.am/epps/help.do) «Տնտեսական օպերատորի օգտվողի ձեռնարկով» պահանջվող կամ կատարման համար պարտադիր բոլոր գործողությունները (առանց բացառության) հստակ և բարեհաջող կատարել են, ինչը հավաստում է նաև Համակարգը իր կողմից գեներացված, համարակալված և Ընկերությանը ուղարկված ծանուցմամբ:

1.3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նշված հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար, գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ «Մակսիմ» ՍՊԸ-ն պնդել է, որ սահմանված կարգով՝ իրենց կողմից ներկայացված և Համակարգի կողմից ընդունված վերը նշված Ընթացակարգի հայտը, Համակարգի կողմից հետագա գնահատման համար ոչ ընդունելի (հանձնաժողովը հայտը բացելու կամ գնահատելու հնարավորություն չունի) լինելու հանգամանքը խախտում է վերը նշված օրենքով Ընկերությանը վերապահված իրավունքները և օրինական շահերը: Ինչպես նաև չի ապահովում մրցակցության հավասար պայմաններ և առաջացնում է գնման գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտներ:

Ընկերությունը նշել է նաև, որ Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ն «ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՇՁԲ-15/7-ՄԿ/2016-1/ՏՎ» ծածկարգով ընթացակարգի մասնակցելու ընթացքում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի բ) ենթակետով նախատեսված խախտում, ինչպես նաև ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության կողմից հայտարարված Ընթացակարգին հայտ է ներկայացրել՝ ընդգկված լինելով «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունքը սահմանափակված մասնակիցների» ցուցակում: Բողոքարկման խորհուրդը նույն օրենքի 48-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում (բողոքը ստանալու օրվանից ոչ ուշ, քան քսան օրացուցային օրվա ընթացքում) պետք է ընդուներ և հրապարակեր որոշում՝ նշված ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>

Կենտրոնը 29.08.2016թ. թիվ 01/04.2/3223-16 գրությամբ ՀՀ պաշտպանության նախարարությանը խնդրել է եռօրյա ժամկետում ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ՇՀԱՊՁԲ-3/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին վերաբերող բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի պատճեն-ները և տալ կարծիք:

Պատվիրատուն 07.09.2016թ. թիվ ԴՎԱ/2712 գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի հայտերի բացման արդյունքում պարզ է դարձել, որ «Մակսիմ» ՍՊԸ-ի

հայտը ընդունվել է, սակայն armeps.am էլեկտրոնային կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար անընդունելի, ուստի մասնակցի հայտը մերժվել է, քանի որ գնահատող հանձնաժողովը հայտը բացելու կամ գնահատելու հնարավորության չուներ:

3. ԳԲԽ-92/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-92/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կրծքանշանի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կրծքանշանի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի համաձայն՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am կայքի) համակարգի միջոցով մինչև նույն հրավերը հրապարակվելու (21.07.2016թ.) օրվան հաջորդող 7-րդ աշխատանքային օրվա ժամը 11:00-ին:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.08.2016թ. ժամը 11:00 տեղի ունեցած նիստի համաձայն՝ «Մակսիմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը www.armeps.am էլեկտրոնային կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար անընդունելի (հանձնաժողովը հայտը բացելու կամ գնահատելու հնարավորություն չունի):

4. Կենտրոնը «Մակսիմ» ՍՊԸ-ի կողմից նշված խնդրի լուծման համար դիմել է Armeps համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող «ԱյՅուՆեթվորքս» ՍՊԸ-ին: Կազմակերպությունն ուսումնասիրել է խնդիրը և տեղեկացրել, որ

Ընթացակարգին «Մակսիմ» ՍՊԸ-ի հայտի փաթեթը կոդավորելիս տեղի է ունեցել սխալ Ընկերության համակարգչում, որի հետևանքով փաթեթը չի ապակոդավորվել և պատճառը հնարավոր չէ պարզել, քանի որ տվյալ գործառույթը տեղի է ունեցել Ընկերության համակարգչում:

4. ԳԲԽ-92/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Մակսիմ» ՍՊԸ-ի 26.08.2016թ. ներկայացրած բողոքը, Կենտրոնի 04.08.2016թ. գրությունը, հայտնում է հետևյալը.

Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է՝ ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքի վրա:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին որևէ անձի մասնակցությունը կարող է սահմանափակվել միայն Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ, եթե դա անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության և պաշտպանության ապահովման համար:

Այսպիսով, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կրծքանշանի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/10-ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-3/9» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի համաձայն՝ շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am կայքի) համակարգի միջոցով մինչև

նույն հրավերը հրապարակվելու (21.07.2016թ.) օրվան հաջորդող 7-րդ աշխատանքային օրվա ժամը 11:00-ին:

Համաձայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.08.2016թ. ժամը 11:00 տեղի ունեցած նիստի՝ «Մակսիմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը www.armeps.am էլեկտրոնային կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար անընդունելի (հանձնաժողովը հայտը բացելու կամ գնահատելու հնարավորություն չունի):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ էլեկտրոնային գնումների համակարգի տեխնիկական սպասարկում իրականացնող կազմակերպություն հանդիսացող «ԱյՅուՆեթվորքս» ՍՊԸ-ի պատասխանի համաձայն՝ Ընթացակարգին «Մակսիմ» ՍՊԸ-ի հայտի փաթեթը կոդավորելիս տեղի է ունեցել սխալ Ընկերության համակարգչում, որի հետևանքով փաթեթը չի ապակոդավորվել և պատճառը հնարավոր չէ պարզել, քանի որ տվյալ գործառույթը տեղի է ունեցել Ընկերության համակարգչում, ուստի գտնում ենք, որ նման պայմաններում «Մակսիմ» ՍՊԸ-ի գնման գործընթացին մասնակցելու իրավունքը (տվյալ դեպքում հայտ ներկայացնելու իրավունքը) սահմանափակված չի եղել և Ընկերությունը օբյեկտիվորեն զրկված չի եղել գնման գործընթացին մասնակցելու իրավունքից, ուստի և առկա չէ Օրենքի 3-րդ և 6-րդ հոդվածների խախտումներ:

Ինչ վերաբերում է Ընկերության բողոքով ներկայացրած՝ գնահատող հանձնաժողովի N 2 արձանագրությամբ կայացված՝ «Մակսիմ» ՍՊԸ-ի հայտը չքննարկելու մասին որոշումը դադարեցնելու, Ընկերության խախտված իրավունքը վերականգնելու և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով նշված սկզբունքներով Ընկերության մասնակցությունը Ընթացակարգին ապահովելու պահանջներին, ապա հայտում ենք, որ վերոհիշյալ պահանջն անհիմն է, քանի որ «Մակսիմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած հայտը www.armeps.am էլեկտրոնային կայքի կողմից համարվել է հետագա գնահատման համար անընդունելի և գնահատող հանձնաժողովը հայտը բացելու կամ գնահատելու հնարավորություն չունի:

Ընկերությունը բողոքում նշել է նաև, որ Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ն «ՀՀ ԿԱ Ո ՇՀԱՇՁԲ-15/7-ՄԿ/2016-1/ՏՎ» ծածկարգով ընթացակարգի մասնակցելու ընթացքում թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտում, ինչպես նաև ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության կողմից հայտարարված ընթացակարգին հայտ է

ներկայացրել՝ ընդգկված լինելով «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունքը սահմանափակված մասնակիցների» ցուցակում:

Վերը նշված հարցի կապակցությամբ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ ի դեմս ԳԲԽ-89/16 բողոքը քննող հանձնաժողովի, 13.09.2016թ. կայացրած որոշմամբ բավարարել է Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ի 23.08.2016թ. ներկայացրած բողոքը, որով արձանագրել է, առկա չէ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշում Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու վերաբերյալ, ուստի Երևանի ոսկերչական գործարան-1 «Գնոմոն» ԲԲԸ-ն զրկված չէ գնումների գործընթացներին մասնակցելու իրավունքից:

Բացի այդ, ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ ի դեմս ԳԲԽ-89/16 բողոքը քննող հանձնաժողովի, 13.09.2016թ. կայացրած որոշմամբ արդեն իսկ դադարեցրել է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից կայացված 4.2 որոշումը՝ Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասով, ուստի այս մասով «Մակսիմ» ՍՊԸ-ի 26.08.2016թ. ներկայացրած բողոքը առարկայազուրկ է:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ Ընկերության 26.08.2016թ. բողոքն անհիմն է, ուստի առաջարկում ենք «Մակսիմ» ՍՊԸ-ի 26.08.2016թ. բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի գլխավոր
մասնագետ՝ ԳԲԽ-92/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Հովակիմյան